«Յուքոմ» ՓԲԸ
ՀՀ, 0069, ք. Երևան,
Դավիթ Անհաղթի փ., շ. 8/4
Հեռ.՝ +374 11 400 400
Էլհասցե՝ info@ucom.am
www.ucom.am

"Ucom" CJSC
Davit Anhaght St., bldg. 8/4
Yerevan, 0069, RA
Tel.: +374 11 400 400
E-mail: info@ucom.am
www.ucom.am

ЗАО "Юком"
ул. Давида Анахта, д. 8/4
г. Ереван, 0069, РА
Тел.: +374 11 400 400
Эл. почта: info@ucom.am
www.ucom.am

**«ՅՈՒՔՈՄ» ՓԲԸ ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ**
**ՀՐԱՄԱՆ10.07.2025/03**
**«ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐ»-ՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

ք. Երևան 10.07.2025թ.

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 88-րդ հոդվածի 2-րդ կետով, 3-րդ կետի «թ» ենթակետով, ինչպես նաև «Յուքոմ» ՓԲ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կանոնադրության 16.5.8-րդ կետով, ինչպես նաև նպատակ ունենալով Ընկերության և Բաժանորդների միջև ծագող վեճերի լուծումն իրականացնել արբիտրաժի միջոցով՝

**Հրամայում եմ**

1. «Էլեկտրոնային հաղորդակցության և հարակից այլ ծառայությունների մատուցման ընդհանուր դրույթներ և պայմաններ»-ի (այսուհետ՝ ԸԴՊ).
1. 1. «9. Վճարման կարգ և վճարումներ» վերտառությամբ գլուխը լրացնել նոր 9. 37-րդ կետով՝ հետևյալ խմբագրությամբ.
«9. 37. Բաժանորդի կողմից Բաժանորդային պայմանագրով ստանձնած իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Յուքոմն իրավունք ունի գանձել, իսկ Բաժանորդը պարտավոր է վճարել պարտքերի հավաքագրման վճար (ծախս)՝ Բաժանորդի ընդհանուր պարտքի մինչև 20 տոկոսը (20 տոկոսը ներառյալ)»:
1. 2. 15. 2-րդ կետից հանել «(եթե առկա է արբիտրաժային համաձայնություն)» բառերը:
1. 3. 16. 2-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.
«16. 2. Բաժանորդային պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերի և տարաձայնությունների լուծման համար Յուքոմը և Բաժանորդը գալիս են արբիտրաժային համաձայնության առ այն, որ Բաժանորդային պայմանագրի շրջանակներում ծագած բոլոր վեճերի (ներառյալ, բայց չսահմանափակվելով՝ Բաժանորդային պայմանագրի պարտքերի, բաժանորդային պայմանագրի կնքված լինելու, անվավերության, առոչինչ լինելու, դրանց հետևանքների, կատարման, խախտման, լուծման, դրանից բխող պարտավորությունների դադարման հետ կապված) լուծումը, բացառելով ընդհանուր իրավասության դատարանների,

նոտարական պալպտի կամ նոտարների ենթակայությունը, հանձնվելու է «Հայաստանի Հանրապետության առևտրաարդյունաբերական պալատին կից մշտապես գործող արբիտրաժային հաստատություն» հիմնարկին, եթե Բաժանորդի և Յուքոմի միջև կնքված Բաժանորդային պայմանագրում կամ համաձայնագրում կամ կողմերի միջև սահմանված այլ փաստաթղթով այլ արբիտրաժային հաստատություն սահմանված չէ: Գործի քննությունն իրականացվում է «Առևտրային արբիտրաժի մասին» օրենքին, ինչպես նաև Արբիտրաժային հաստատության կանոնադրությանը և կանոնակարգին (արբիտրաժային վերապահման կամ համաձայնության կնքման պահին գործող) համապատասխան:

Յուքոմը և Բաժանորդը սահմանում են, որ արբիտրաժի ընթացքում ցանկացած հաղորդակցություն և/կամ ծանուցում իրականացվում է, ինչպես նաև արբիտրների կազմը ձևավորվում է Արբիտրաժային հաստատության կանոնակարգին համապատասխան:

Արբիտրաժային դատավարության լեզուն հայերենն է, արբիտրաժի վայրը՝ քաղաք Երևանը: Յուքոմը և Բաժանորդը պայմանավորվում են, որ վեճերի քննությունը կիրականացվի միայն գրավոր ընթացակարգով՝ ներկայացված փաստաթղթերի և այլ նյութերի հիման վրա, եթե արբիտրաժային տրիբունալի որոշմամբ այլ բան սահմանված չէ:

Արբիտրաժային հաստատության կողմից վեճերի լուծումն իրականացվում է՝ Հայաստանի Հանրապետության նյութական իրավունքի նորմերի համաձայն»:

2. Հրամանը և դրանով նախատեսված փոփոխություններն ու լրացումն ուժի մեջ են մտնում բաժանորդներին ծանուցող հաղորդագրություն ուղարկելու օրվան հաջորդող 30-րդ օրը:

Գլխավոր տնօրեն՝ Ռալֆ Յիրիկյան

Կատարող՝ Նազելի Սմբատյան,
Ավագ իրավախորհրդատու
Հեռ.՝ +374 43 353 139